ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/25

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից 26.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 26.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցում և ստացված հայտերի գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Հանձնաժողով) 18.07.2017թ. կայացրել է թիվ 3 որոշումը, որով ընկերությունների՝ «Երպետ» ՍՊԸ-ի, «Ատլանտ» ՍՊԸ-ի և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտերը գնահատել են բավարար՝ հետևյալ հիմնավորմամբ. «Հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են»:

Պատասխանողի կողմից կայացված թիվ 4 որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված մասնակից) ճանաչվել են «Երպետ» ՍՊԸ-ն և «Ատլանտ» ՍՊԸ-ն:

Նշված ընթացակարգով գնման հայտ էր ներկայացրել նաև «Էլլիպս ՋիԷյ» ՍՊ ընկերությունը, որի կողմից ներկայացված գնային առաջարկը առանց պատճառաբանության մերժվել է:

Պատասխանողի կողմից նույն օրը կայացվել է նաև թիվ 5 որոշումը, որով սահմանվել է հետևյալը. «Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ կետերը՝ հանձնաժողովը որոշեց.

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև իրենց կողմից ներկայացվող ապրանքների ամբողջական նկարագիրը»:

Ընկերությունը գտնում է, որ Պատասխանողի վիճարկվող գործողություններով (որոշումներով) խախտվել են «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ի իրավունքները և օրինական շահերը, և հավելելով հետևյալը.

«Պատասխանողի որոշումները կայացվել են օրենքի ակնհայտ խախտումներով և որպես առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող, դրանք ենթակա են անվավեր ճանաչման:

Այս դիմումով վիճարկվում են Պատասխանողի կողմից 18.07.2017թ. կայացված թիվ 3 և թիվ 4 որոշումները (թիվ 1 որոշումը, բովանդակային առումով, նույնական է թիվ 3-ի հետ), որոնց անվավերության փաստական և իրավական հիմնավորումները ներկայացվում են ստորև.

Դիմումի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1. «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը 18.07.2017թ. կազմել է թիվ 2 արձանագրությունը, որով ներկայացվել են նաև վիճարկվող որոշումները:

2. Թիվ 2 արձանագրության կազմմանը մասնակցել են գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Քալանթարյանը (նախագահ), Է. Աղասյանը, Ն. Սարգսյանը, Ս. Պապոյանը (անդամներ):

3. Գնանշման հայտերի բացման մասին առկա է հետևյալ արձանագրումը.

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԵՐՊԵՏ» ՍՊԸ և «Ատլանտ» ՍՊԸ - ՀՀ, ք. Երևան, Զ. Քանաքեռցու փ.32, հեռ. 096 00 65 56, էլ. հասցե erpet.erpet@mail.ru, ՀՎՀՀ «ԵՐՊԵՏ» ՍՊԸ՝ 00901742, ՀՎՀՀ «Ատլանտ» ՍՊԸ 7707833200:

2. «ԷլլիպսՋիէյ» ՍՊԸ---ք. Երևան, Ն. Տիգրանյան 27, հեռ. 010 23 15 20, էլ. հասցե el@sec.am ՀՎՀՀ 00067177:

Հատկանշական փաստ է, որ Պատասխանողի կողմից արձանագրվել է 2 մասնակից իրավաբանական անձ, «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ն և «Ատլանտ» ՍՊԸ-ն արձանագրվել են որպես մեկ մասնակից:

3. Պատասխանողի կողմից կայացվել է թիվ 1 որոշումը, (վիճարկվող 3-րդ և 4-րդ որոշումները ևս), որով կողմ են եղել 3 անդամներ, դեմ 0:

Հատկանշական փաստ է, որ հանձնաժողովի 4 ներկա անձերից, բոլոր հարցերով, մշտապես քվեարկել են 3-ը, դեմ 0: Մյուս մասնակցի քվեարկության արդյունքներն անհայտ են:

«Գնումների մասին» ՀՀօրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում նույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

6.Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

3. Եթե նույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

4. Արգելվում է նույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) նույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

5. Պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձինք գնումներին մասնակցում են այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ կազմակերպություններում պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. Նույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

6. Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Պատասխանողի 18.07.2017թ. թիվ 2 արձանագրությունը, որով կատարվել է գնման ընթացակարգը, չի պարունակում որևէ տվյալ առ այն, որ «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ն և «Ատլանտ» ՍՊԸ-ն հանդես են գալիս համատեղ գործունեությամբ (կոնսորցիումով) և ներկայացված հայտի ծրարում համատեղ գործունեության պայմանագրի առկայությունը չի արձանագրված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

4. Եթե գնահատող հանձնաժողովի անդամը կամ մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված արձանագրությանը:

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին»:

Ընկերությունը հատկանշական է համարում այն փաստը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի և 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջները չեն կատարվել (խախտվել են):

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովը «Երպետ» ՍՊԸ-ին և «Ատլանտ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելով հանդերձ, չի արձանագրել երկու իրավաբանական անձանց համատեղ հանդես գալու իրավունք առաջացնող («Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով) համատեղ գործունեության պայմանագրի առկայությունը, թեև միայն այդ պայմանագրի առկայությունը կարող էր հիմք տալ հանձնաժողովին՝ մասնակցի, հրավերի պահանջներին համապատասխանության մասին եզրահանգման համար:

Ընկերությունը հայտնում է նաև. «Հանձնաժողովը խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և 11-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները արձանագրությունը չեն ստորագրել և չեն նշել իրենց անունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

4. Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումներին կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Ընկերությունը նշել է, որ վկայակոչված իրավական ակտերի, սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում համոզմունք ենք հայտնում, որ օրենքի խախտմամբ, գնման ընթացակարգի իրականացումը հանգեցրել է մասնակցի՝ «Էլլիպս ՋիԷյ>ՍՊԸ-ի», գնման գործընթացին մասնակցելու հավասարության իրավունքի խախտման և վիճարկվող գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել այն սուբյեկտը (սուբյեկտները), որոնք առանձին չեն համապատասխանում գնման հրավերով առաջադրված պահանջներին, իսկ համատեղ հանդես գալու իրավունք սահմանող պայմանագիրը հանձանժողովի կողմից չի արձանագրվել՝ հետևաբար գոյություն չունի: Հանձնաժողովի վիճարկվող որոշումները կայացվել են օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներով և այդ խախտումներով կայացված իրավական ակտերը հակասում են առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին և այդ հիմքով ենթակա են անվավեր ճանաչման»:

Ընկերությունը գտնում է, որ Օրենքի խախտմամբ ընդունված որոշման հիման վրա գնման պայմանագրի կնքումը կլինի ակնհայտ ոչ իրավաչափ գործողություն, և խնդրել է.

1. Ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասները կանխելու նպատակով՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի կայացված որոշման (որոշումների) իրականացումը և արգելել այլ անձի հետ պայմանագրի կնքումը՝ մինչև բողոքի քննությամբ կայացվելիք որոշման ընդունումը:

2. Անվավեր ճանաչել հանձնաժողովի կողմից 18.07.2017թ. կայացված՝ «Երպետ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում կայանալիք նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

««Լուսանշան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 080 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում հրավերով սահմանված կարգով հայտ է ներկայացվել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, ինչպես նաև «ԵՐՊԵՏ» ՍՊԸ և «Ատլանտ» ՍՊԸ-ների կողմից, որոնք հանդես են եկել համատեղ:

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավար և ոչ մի մասնակցի հայտ չի մերժվել հանձնաժողովի կողմից:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից ստորագրված բացման նիստի արձանագրությունը հրապարակված է տեղեկագրում:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ընթացակարգի հետ կապված որևէ փաստաթղթի կամ պարզաբանման պահանջ չի ներկայացվել:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին ներկայացված արձանագրության էլեկտրոնային տարբերակը ավարտուն չի եղել և ուղարկելիս սխալմամբ է կցվել, ինչից ելնելով չի կարող ենթադրվել, որ հանձնաժողովի գործողությունները օրինաչափ չեն:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ հանձնաժողովի կողմից կայացված ոչ մի որոշում չի հակասում Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, հանձնաժողովի գործողությունները չեն հանգեցրել որևէ մասնակցի իրավունքների խախտմանը, չեն եղել խտրական և չեն սահմանափակել մրցակցությունը»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Լուսանշան» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից 26.07.2017թ. ներկայացրած բողոքը, ««ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի և «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ների (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերի պատճենները, Ընթացակարգի հայտերի գրանցամատյանի պատճենը, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 080 գրությունը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը լուսացույցերի ձեռքբերման նպատակով հայտարարել է ««ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

18.07.2017թ. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն և «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ները՝ համատեղ գործունեության կարգով:

Հանձնաժողովի կողմից 18.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության թիվ 3 որոշմամբ Ընկերության և «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ների ներկայացված հայտերը գնահատել է բավարար հետևյալ հիմնավորմամբ.

«Հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են:»:

Նույն արձանագրության թիվ 4 որոշմամբ Հանձնաժողովը ներկայացված գնային առաջարկների հիման վրա Կոնսորցիումին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը 2017թ. հուլիսի 25-ին որոշում է կայացրել «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-երի կոնսորցիումը ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-երի կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելու մասին:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը չի պարունակում որևէ տվյալ առ այն, որ

«ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ն և «Ատլանտ» ՍՊԸ-ն Ընթացակարգին հանդես են եկել համատեղ գործունեության կարգով, այսինքն, Հանձնաժողովը չի արձանագրել «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի հայտում համատեղ գործունեության պայմանագրի առկայությունը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և 11-րդ ենթակետով սահմանված պահանջները, մասնավորապես, Ընկերությանն ուղարկված արձանագրությունը գնահատող հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կողմից ստորագրված չի եղել և վերջիններիս անունները նշված չեն եղել:

Որպես կայացված որոշման հիմնավորում՝ Պատվիրատուն 03.08.20172. թիվ 080 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ իր կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Բողոքի քննության նպատակով 01.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և ներառել է նշված ընկերությունների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագիրն ու գնային առաջարկը:

Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդին է տրամադրել «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, որում առկա է եղել նաև «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի միջև 17.07.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից 06.07.2017թ. հաստատված «ԼՈՒՍ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտերի գրանցամատյանը՝ «ԵՐՊԵՏ» ՍՊԸ-ի և «Ատլանտ» ՍՊԸ-ի համատեղ ներկայացված հայտի վերաբերյալ համապատասխան գրառումով:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին ներկայացված արձանագրության էլեկտրոնային տարբերակը եղել է անավարտ և ուղարկվելիս սխալմամբ է կցվել, և հավելեց, որ նշված արձանագրության ավարտուն տարբերակը սահմանված ժամկետներում և կարգով հրապարակվել է տեղեկագրում:

Հրավերի 4.3 կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները

նույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Խորհուրդն արձանագրում է, որ «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ների համատեղ ներկայացված հայտը ներառել է համատեղ գործունեության պայմանագիրը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի 18.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությունը պարունակում է տեղեկատվություն «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ների համատեղ ներկայացված հայտը հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև նշված արձանագրությունը հրապարակված է պաշտոնական տեղեկագրում և ստորագրված է Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր:
- 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2)հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3)տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4)տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին(...):

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը «ԵՐՊԵՏ» և «Ատլանտ» ՍՊԸ-ների հայտը բավարար գնահատելով և վերջիններիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի 26.07.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**